

2887

ԲԱՏԱՐԱԿԱԽԹԻՆ «Ա.ՊՕ.Բ» ԱՄՐԱՊԼՐԻ

№ 4

12694

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ

(Չինական իմբուսանել)

Կազմեց Պ. Ա. Բուլանժե

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ Լ. Կ. SOLUSOSԻ

Թարգմ. ՍՈՒՐԵՆԱԹԵԱՆ

280
1034-ԲՈՒ

206.4 (Յութիս)

Թ Ի Յ Լ Ի Ս

ան «ԷՊՈԽԱ» Գանովակայա փող. № 3.

1910

F - 92

ԲԱՑԿԱԾ Ե ԲԱԺԱՆՈՐԴ ԴԳՐՈՒԹԻՒՆ

Ա.Խ.Զ.Հ.Ա. ՏԵՇ ՊԵՂԱԿԱՆ

II ՏԱՐԻ „ԱՐՕՐ“ II ՏԱՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՔՈՒԵՍՏԱԿԱՆ,
ԴԻՏԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ԽԱՂԱՉԱՄԻՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Բ Ի

«ԱՐՕՐԸ» հրատարակելու է Թիֆլիսում խմբագրութեամբ Հ.
Առաքելեանի և աշխատակցութեամբ ոռոսհայ Թիւրքանայ և
պարսկահայ զբողների:

«ԱՐՕՐԻՆ» աշխատակցելու հայ

Ա. Ավագյանեան, Ա. Աթանասեան, բժշկ. Աղասարեան Բ.,
Առրուշան, բժշկ. Արծըռնի Վ., Առաքելեան Արշակ, Ա.
Թարեգեան Մ., Բաբեկն եղիսկոպօս Կիւլէսէրեան, Բաշա-
լեան Լիոն, Բաշինջաղեան Գ., Բաբայեան Խ., Գասպարեան
Յարութիւն, գօրտօր Գրէնֆիլդ Ջէմս., Դանիէլեան Լ.,
Դը. Գուբերնատիս Անջէլլո, սենատօր (իտալական պրօֆէ-
սօր), Եղեկեան Ա., Եսայեան Ս., Էմմանուէլ Բ. Նազարեան.,
Թէքեան Վ., բժշկ. Թիրեաքեան Յարութիւն խան, Խանագատ
Բ., Խուրշիդ, Կալսաս, Կրասինիկեան Կ., Զուլեան Ա., Մալ-
խասեան Ա., Մալխատգեան Ա., Մաքլէր Ֆ. (Փրանսիացի հա-
յագէտ), Մեսրոպ Ք. Մելեան, Յարութիւնեան Ի., Նաթա-
նեան Միք., Նազարէթեան Ա., Նամալեան, բժշկ. Շահրա-
գեան Ա., բժշկ. Շինեան Ա., Շահրիար, Զալխուշեան Գ.,
Զախմախսաղեան Յ., Սարուխան Ա., Սուրխաթեան, Սա-
մուէլեան Խ., Սպէնդիարեան Յ., պրօֆէսօր Վեսելօվսկի Ի.,
Տէլ-Մինասեան Ե., Քօֆֆօր Մտ., Քալանթար Ա.

«ԱՐՕՐԸ» ձգտելու է զամանակ հանրամատչելի, ժողովրդական ամ-
սագիր ամենքի համար, տալ հայ ժողովրդին, ասող, թարժ մտա-

206.4/409 ԴՐԱԿԱՆ

F-99 ԱՐ

№ 4 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱՐՕՐ» ԱՄՍԱԳՐԻ

№ 4

280

1084-602

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ

(ՉԻՆԻԱՆ ԻՄԵՍՈՒՆԻ)

Կազմեց Պ. Ա. Բուլանժէ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ Լ. Ն. ՏՕԼՈՅԾԻ

Թարգմ. ՍՈՒՐԵՆԱԹԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Ելեքտր. տպարան «ԷՊՈԽԱ» Գանովսկայա փող. № 3.
1910

Կ Օ Ն Ֆ Ո Ւ Ի Ց Ւ Ո Ւ

(Չինական իմաստությունը)

Նրա կեանքն ու ուսմունքը

Կաղմաց Պ. Ա. Բուլանժէ.

Խմբագրութեամբ Լ. Ն. ՏՕՂՄՏՅԱՆԻ

Ներածութիւն—Կօնֆուցիոսի կեանքն ու ուսմունքը—Աստծոյ մասին—
Քարիքը, կեանքի իմաստը—Կրօնի մասին—Սիրոյ մասին—Առաքինութեան
և իմաստութեան մասին—Վարքի մասին—Իմաստուն, հոգեոր մարդու մա-
սին—Սիալներ և մոլորութիւններ—Ռւսականք կեանքի մասին:

ՆԵՐԱԾՈՒՀԻԹԻՒՆ

Կօնֆուցիոսի կեանքն ու ուսմունքը

Չինաստանի կրօններից մէկի հիմագիրն էր Կօնֆուցիոսը:
Այդ կրօնը համարվում է ամենատարածվածը աշխարհում. Չի-
նաստանի ժողովրդի թիւն է 500 միլիոն:

Կօնֆուցիոսը ծնվել է 551 թ. Քրիստոսից առաջ:

Նրա կեանքի մասին քիչ տեղեկութիւններ են պահպան-
վել: Սկզբում Կօնֆուցիոսը ծառայում էր իրքեւ պաշտօնեայ, և
նրան չափազանց զնահատում էին: Սակայն Կօնֆուցիոսը ծա-
ռայութիւնից շատ շուտով հրաժարվեց: Երբ նա 22 տարեկան
ր, նրա բնակարէանում շատ մարդ էր հաւաքվում, որոնք լսել
էին նրա խելքի և կրթութեան մասին և կամենում էին սովո-
րել: Կօնֆուցիոսի մասին լուրը արագ կերպով տարածվեց երկ-
րում, և նրա մօտ սկսեցին գալ և' ականատոր, հարուստ մար-
դիկ, և' պաշտօնեաները, և' աղքատները: Չինական նահանգնե-
րի կառավարիչները, բազմից լսելով Կօնֆուցիոսի խելքի մա-
սին, հրաւիրում էին նրան իրանց մօտ՝ կամենալով օգովել
նրա խորհուրդներից և փոփոխութիւն մտցնել իրանց նահանգ-

ների կառավարութեան մէջ։ Սակայն Կօնֆուցիոսի խորհուրդն ները կառավարիչներին գուր չէին գալիս։ Կօնֆուցիոսը ասում էր նրանց, որ լաւ կարող է կառավարել նաև միայն, ով կաշխատէ ծառայել Աստծուն, կաշխատէ ուղղել նախ իր անձը և ապա կը ծառայէ ժողովրդին, աշխատելով մարդկանց մէջ բարձրացնելու աստուածային սկզբունքը։

Չինական իշխաններին դուր չէր գալիս այսօրինակ ուսմունքը ուստի և սկսեցին նրանք երկիւղ կրել, որ եթէ Կօնֆուցիոսի այդ մտքերը սկսեն տարածվել ժողովրդի մէջ, նրանց այլս կը դադարեն պատվել ու լսելուց, կը դադարեն և վախճենալուց։ — Մինոյն ժամանակ Կօնֆուցիոսը անստարբեր էր վերաբերվում այն ժամանակ Չինաստանում դաւանված կրօնի ծէսէրին։ Չինացիները մեռածների հոգիներին էին հաւատում, ծառայում էին նրանց և զրա համար հաստատված բազմաթիվ ծէսեր ունէին։ Երբ հարցնում էին նրան, թէ ինչո՞ւ նա անստարբեր է դէպի այդ ծէսերը, Կօնֆուցիոսը պատասխանում էր. նախ քան մեռածների մասին մտածելը և նրանց ծառայելը՝ անհրաժեշտ է մտածել և ծառայել կենդանի մարդկանց։

Այդ բոլորը այն հետևանքն ունեցաւ որ երբ Կօնֆուցիոսի մտքերը լայնօրէն տարածվեցին ժողովրդի մէջ այն նահանգում, որտեղ ապրում էր Կօնֆուցիոսը՝ կառավարիչները նրան այնտեղից արտաքսեցին։ Այն ժամանակ Կօնֆուցիոսը իր մի քանի աշակերտների հետ սկսեց փոխադրվել մէկ տեղից միւսը։ Սակայն չէնց որ կառավարիչները իմանում էին, թէ նա մտել է իրանց նահանգը, անմիջապէս նրանք ձեռք էին առնում միջոցներ, որպէս զի կամ նրան սպանեն և կամ անհարին դարձնեն նրա հաղորդակցութիւնը ժողովրդի հետ։ — Կօնֆուցիոսի բարեկամներն ու աշակերտները շատ էին դայրանում, որ իրանց ուսուցչին ոչ միայն չեն զնահատում, այլ և հալածում են։ Կօնֆուցիոսը սակայն միշտ հեղութեամբ ու իմաստութեամբ նրանց միխթարում էր։ Նա ասում էր, թէ մարդու պարտականութիւնը չպէտք է լինի նրանում, որ ուրիշ մարդիկ գնահատեն իրան, այլ նրանում, որ նա զգայ և սիրէ ինքը իր մէջ եղած բարձրագոյն կեանքը։ Այն չէ կարենը, որ մարդիկ գիտենան և գնահատեն, այլ այն, որ Աստուած զիտենաց։

Այդպէս Կօնֆուցիոսը մինչև իր կեանքի վերջը թափափում էր Չինաստանի նահանգներում և մեռաւ 74 տարեկան հասակում, 478 թ. Քրիստոսից առաջ։

Կօնֆուցիոսը մարդկանց սովորեցնում էր, թէ իւրաքանչիւր մարդ նախ քան սկսելը որեէ գործ իր կեանըում, որէտք է իմանայ՝ ինչո՞ւ համար է ապրում ինքը, որէտք է իմանայ իր կեանքի իմաստը։ Իւրաքանչիւր մարդ պէտք է հասկանայ, որ նա ստեղծված է ոչ թէ ուտելու և խմելու համար, այլ նրա մէջ դրված է նաև աստուածային սկզբունքը։ Եւ զրա համար ամենից առաջ նա պէտք է իմանայ Աստծոյ կամքը և աշխատի ամբողջ ոյժով բարձրացնել իր մէջ այդ աստուածային սկզբունքը, դասնայ բարձրագոյն էակ, որ բոլոր մարդիկ եղայրյաներ են, և, որչափ էլ ծանր լինի նրա նիւթական կեանքը, նա չի դժգոհիլ զգվիլ իրանից։ — Բոլոր մարդիկ հաւասար են, ամենքի մէջ դրված է աստուածային սէզբունքը, ուստի և բոլոր հաւասար են, բոլոր մարդիկ եղայրյաներ են, որով մարդը երբէք մենակ չի լինում։ Եւ իր մէջ աստուածային սկզբունքը բարձրացնելու համար կայ մի միջոց և այդ միջոցը՝ սէրն է։ Նա միատեսակ է և՛ կառավարիչների և՛ հպատակների համար, և՛ հարուստների և՛ աղքատների համար։ Եւ երբ մարդիկ այդ համականան՝ մարդկանց մէջ բոլոր տարբերութիւնները կանյայտնան, չեն լինիլ ոչ մեծատուններ, ոչ ստորներ, ոչ հարուստներ, ոչ աղքատներ։ Երկրի վրայ կիշխէ խաղաղութիւնը։

Կօնֆուցիոսի ու ամունքը շատ արագ սկսեց տարածվել ժողովրդի մէջ. ժողավուրդը սկսեց արթնանալ և զիտակցել այն խարերայութիւնը, որի մէջ նա ապրում էր մինչև այդ։ Չինական իշխանութիւնները տեսան այդ և սկսեցին հալածել Կօնֆուցիոսի ուսմունքը։ Չինական Տօինդ-չի-խօանդ-տի կայսրը 213թ. Թ. ա. հրատարակեց մի հրովարտակ։ Որի մէջ հրամանագրված էր ոչնչացնել այն ամեն գրեթերը, որոնք պարունակում էին Կօնֆուցիոսի ուսմունքը, իսկ նրանց, որոնք պահեն այդ զրքերը՝ մահուան զատապարտել։ Հազարաւոր մարդիկը որոնք ընդունել էին Կօնֆուցիոսի ուսմունքը՝ ողջ-ողջ թագիցին հողի մէջ կամ գլխատվեցին. տասնեակ հազարներով աքսորվիցին տաժանակիր աշխատանքների։ Չինաստանի իշխանաւորներին թվում էր, թէ նրանք այդօրինակ միջոցներով արմատից ոչնչացը են իրանց համար ատելի ուսմունքը։ Սակայն նրանք սիմալվեցին։ Այդպիսի բոնի միջոցներով անհնարին էր ոչնչացնել այն ուսմունքը, որի արմատը դրված է իւրաքանչիւր մարդու հոգու մէջ։

Անցաւ հարիւր-յիսուն տարի ես, և Կօնֆուցիոսի ուսմունքը ոչ միայն չը չքացաւ, այլ աստիճանաբար սկսեց ձեռքերել բազմաթիւ հետեղներ։ Նոր կենսահայեցողութիւնը նը-

վաճռմ էր և՝ իշխանաւորներին և՝ ժողովրդին, և՝ աղքատներին և՝ հարուստներին: Բոհութիւնը նրան չը յաղթահարեց, այլ նրա զօրութիւնը թուլացրին ուրիշ միջոցները: Իշխողներից ու հարուստներից շատերը, որոնք տեսել էին նոր ուսմունքի խելացիութիւնն ու ընդունել այն, աշխատում էին նրան բացատրել ու փոփոխել այնպէս, որ իրանց կեանքը չը խանգարէ: Գրտնականներն էլ այդ ուսմունքին աւելացրին այն, ինչ որ գրված է եղել մինչև Կօնֆուցիոսը և որը նա ժխտում էր: Սը-կուցին խօսել, որ Կօնֆուցիոսը չէ ժխտել ոչ նախկին կրօնը և ոչ ծէսերը, այլ աշխատել է նրանց մի փոքր ուղղել: Վերջապէս չինական կայսրներից մէկը հրամայում է գիտնականներին՝ հաւաքել Զինաստանի բոլոր սրբազն գրքերը: Գիտնականները հաւաքեցին զանազան հին գրքեր, նոյնպէս և այն գրքերը, որոնց մէջ մեկնված էր Կօնֆուցիոսի ուսմունքը, և բոլոր այդ գրքերը սրբազն յայտարարեցին: Այդ բաւական չէ, նրանք յայտարարեցին, որ այդ բոլոր գրքերն էլ գրված են Կօնֆուցիոսի ձեռքով: Խսկ այդ գրքերի մէջ գրված էր ամեն բանի մասին, և՝ ամենաառաջին՝ թագաւորների թագաւորութեան մասին, և՝ ծէսերի ու ծիսակատարութիւնների, ու քոնք կատարվելու են եղել ամենահին ժամանակներից սկսած, և այլն և այլ:

Սկսեցին փառարանել Կօնֆուցիոսին նրա անօրինակ գիտնականութեան համար, և մանաւանդ նրա համար, որ նա այդքան գրքեր է գրել և այդքան ծէսեր մտցրել: Սկսեցին Կօնֆուցիոսի անունով տաճարներ կառուցանել, նշանակելով մարդիկ, որոնք մի միայն որպէս թէ գիտեն ու կարող են բացատրել Կօնֆուցիոսի այդ գժուար ուսմունքը:

Բայց այդ գրքերի մէջ պահպանվեցին և նրանք, որոնց մէջ գրված էին Կօնֆուցիոսի խոկական ուսմունքը՝ գրված նրա աշակերտների ձեռքով:

Եւ Կօնֆուցիոսի խօսքերը կատարում է ժողովուրդը որ շնորհիւ այդ ուսմունքի, սովորել է լինել հեղ, սիրալիք և աշխատասէր: Զինաստանը այցելող եւրօպացիները զարմանում էին չինական ժողովրդի կեանը վրայ: Այդ կեանը միանգամայն տարբեր է եւրօպացիների կեանքից, մանաւանդ այնտեղ, որտեղ քիչ են լինում եւրօպացիք: Թէև այնտեղ իշխանութիւններ և զօրքեր քիչ կոն, բայց ոճագործութիւնների թիւը առելի պակաս է այնտեղ, քան եւրօպացիների մօտ:

Զինացի Կու-Մունդ-Մինքը ասում է, թէ դա նրանից է, որ չինացիք այնտեղ հաւատում են Կօնֆուցիոսի խոկական ուս-

մունքին և դրա պատճառով էլ այնտեղ քիչ են ոճագործութիւնները, ուստի և հարկաւոր չեն ոչ զինուորներ և ոչ ոստիկաններ...

Կօնֆուցիոսի մահից յետոյ անցել է զրեթէ 2400 տարի: Նրա ուսմունքի, նրա խօսքերի վրայ աւելացված են այդ ժամանակաշրջանում բազմաթիւ կողմնակի, անհամաձայն և միանգամայն հակառակ բաներ: Դժվար էր որոշել, թէ ինչ է ասում Կօնֆուցիոսը և որն է ուրիշների ասածը՝ նրան վերագրված: Սակայն հրապարակ եկան բարեխիզդ գիտնականներ, որոնք սկսեցին հետազոտել սրբազն գրքերը, որոնք վերագրվում էին Կօնֆուցիոսին, սկսեցին ուսումնամասիրել և հաստատեցին նաև այն, որ Կօնֆուցիոսի ոչինչ չէ գրել: Հաստատեցին նաև այն, որ Կօնֆուցիոսի ուսմունքը՝ գրված նրա աշակերտների և վերջինների աշակերտների ձեռքով՝ պահպանվել է մի միայն երեք գրքերի մէջ: Այդ գրքերն են՝ Մեծ Գիտութիւնը, Ուսմունք Կենտրոնի մասին (կամ աւելի ճիշտ՝ «Ուսմունք կեանքի մասին»), Կօնֆուցիոսի Խօսակցութիւնները, որոնք և հիմք ծառայեցին կազմելու ներկայ գրքոյկը

I

Աստծու մասին.

Մարդկային կեանքի գերագոյն նպատակը կայանում է նըքանում, որ գտնվի և իրականացվի կեանքում Աստծու կամքը, նրա օրէնքը, այսինքն արտայալովի մեր ես-ի ճշմարիտ, բարորական էութիւնը (Ուսմ. Կենտրոնի մասին II, 2),

Աստծու կամքը—այն է, որին մենք մեր կեանքի օրէնք ենք անուանում: Մեր կեանքի օրէնքի կատարումը հէնց այն է, որին մենք բարոյական, ճշմարիտ կեանք ենք՝ անուանում: Երբ մեր կեանքի օրէնքները ժողովված են կարգով, դասաւորված հետեւղականօրէն՝ դա հէնց այն է, որին մենք կրօն ենք անուանում (Ուսմ. Կենտրոնի մասին I, 1.),

Մեր կեանքի մէջ մենք չպէտք է ոչ մի կերպ նահանջենք Աստծու կամքից, նրա օրէնքը, որից հնար կայ շեղվելու՝ այլ և օրէնք չէ: Ահա ինչու բարոյական, խելացի մարդը ուշագրսութեամբ հետեւում է այն բանին, որը չէ ենթարկվում նրա ախողութեանը, երկիւղ կրում ու զգուշանում այն բանից, որը չէ կարող ըմբռնել նրա լսողութիւնը (Ուսմ. Կենտրոնի մասին I, 2):

Հուսաւորված մարդը: իմանալով շատ բան, կերարկում է իր կեանքի նկատմամբ մի միայն այն, ի՞չ համաձայնում է նրա մէջ տրված աստուածային սկզբունքին, նրա հասկացողութեան ներքին լոյսին. (Խօսակցութիւններ VI, 25):

Եթէ արենստաւորը կամենում է լաւ կատարել իր գործը, նախապէս աշխատում է սրել իր գործիքները: Ըստ այդմ էլ դուք աշխատեցէք ամենից առաջ բազմացնել ձեր մէջ աստուածային սկզբունքը, արաբերութիւն պահպանհցէք իմաստունների և բարեսիրաների հետ, որոնեցէք ձեզ համար ընկերներ առաքինի մարդկանց մէջ (Խօսակցութիւններ XV, 9):

Եթէ աշակերտները Կօնֆուցիոսին հարցըրին, թէ ինչումն է կայանում նրա ուսմունքը, նա ասաց. իմ ուսմունքը — դա հաւատն է դէպի աստուածային սկզբունքը, որը տրված է մեր մէջ, ապա՝ սէր դէպի մերձաւորը (Խօսակցութիւններ IV, 15):

Ճշմարիտ ճանապարհը կամ Աստծու օրէնքը, որով պէտք է ապրել՝ մարդկանցից հեռու չէ գտնվում: Եթէ մարդիկ իրանց համար ստեղծում են կանոններ, օրէնքներ, կեանքի ուղիներ, որոնք հեռու են իրանց բանականութեան ամենահասարակ դատողութիւններից, այդ ուղիները ճշմարիտ համարել չէ կարել:

Մի անգամ Կօնֆուցիոսը բացականչեց. ինչպէս կը ցանկայի ես չխօսել:—Նրա աշակերտներից մէկը, Տսու-Կունգը, նըկատեց. եթէ դուք, ուսուցիչ, չխօսէիք, ինչպէս մենք կը կարողանայինք ձեր ուսմունքը հաղորդել յետադայ սերնդին:—Միթէ Աստուած խօսում է, —պատասխանից Կօնֆուցիոսը: Նրանք, որոնք այդ ցանկանում են, հասկանում են նրան (Խօսակցութիւններ XVII, 19):

Ի՞նչ գարմանալի, ինչ հրաշալի կերպով կարող է մարդը պարզել, արտայայտել իր մէջ դրված երկնային պարզեր: Մենք որոնում ենք այն և չենք անսում, ականջ ենք դնում և չենք լուսում, մինչեն աստուածային այդ էութիւնը թափանցում է ամեն մի գոյութիւն ունեցող իրի մէջ. առանց նրան ոչինչ չէ կարող լինել (Ուսմ. Կենտրօնի Մասին XI):

Այն միջոցները, որոնք գործադրվում են մարդկաւթեան վերածնութեան համար և պարունակում են իրանց մէջ մեծ աղմուկ ու ցուցամոլութիւն, ոչ մի բանի պէտք չեն: Այն ինչ անում է Աստուած, լինում է առանց աղմուկի, իսկ դրանից բարձր ոչինչ չկայ տիեզերում (Ուսմ. Կենտրօնի մասին XXXIII):

Եթէ երկիրը կառավարէր մի իշխանաւոր, որը աշխատելիս լինէր բարձրացնել իր մէջ աստուածային սկզբունքը, չէր

անցնի նոյնիսկ մի հարիւր տարի, և այդ երկրում կանյայտանյին ոճրագործութիւնները և չէին լսվի մահվան պատիժների մասին (Խօսակցութիւններ XIII, 11):

Սաեղծելով բոլոր արարածներին, երկինքը իւրաքանչիւրին տալիս է հարկաւորը՝ համաձայն նրա բնութեան. ծառը ծաղկում է՝ երկինքը նրան կերակում է ու մեծացնում պտուղը. ծառը չորանում է, մեռնում և երկինքը նրան ոչնչացնում է (Ուսմ. Կենտրօնի մասին XVII, 3):

II

Բարիքը, կեանքի իմաստը

Ամենագլխաւորը կեանքում՝ դա նրա իմաստը, նպատակն է, որին մենք պէտք է ձգտենք, դա՝ մեր ճշմարիտ կոչումն է, —և ապա անհրաժեշտ է ընդունել վճիռ, թէ որպիսի ճանապարհ պէտք է ընտրել մեղ համար:—Եթէ այդ վճիռը ընդունված կը լինի, այն ժամանակ միայն հսարաւոր է ունենալ հոգեկան անդորրութիւն, —Եթէ հոգին հանգիստ է և անխռով, մարդը տիրապետում է այն երջանկութեան ու բարօրութեան, որոնց և ոչ մի բան չէ կարող խախտել:—Այն ժամանակ միայն մարդը հնար կունենայ խորհել իրերի էութեան մասին և անմիերի կատարել իր գատողութիւնները: Իսկ խորհելով իրերի էութեան մասին և անմիերի կատարելով իր գատողութիւնները, կարելի է հասնել և այն կատարելութեան, որին ձգտելը յատուկ է ամենքին (Մեծ Գիտութիւնը, III):

Եւ ամենաբարձրաստիճան մարդու համար, որը կանգնած է բարձրում, և ամենահասարակ մարդու կանգնած ներքեում, կայ միայն մի պարտականութիւն կեանքում:—ուղղիլ, բարեւաւել իր անձը: Դրանումն է՝ կեանքի հիմունքը, դրանում. ընդհանուր բարիքի աղբիւրը (Մեծ Գիտութիւնը, IV):

Եթէ մարդը առաւտեան լսէ, թէ ինչումն է կայանում կեանքի իմաստը, նա կարող է առանց ցաւելու մեռնել միենոյն օրը (Խօսակց. IV, 8):

Մարդ կարող է հրաժարվել թագաւորութեան տիրապետութիւնից, կարող է հրաժարվել պատիժներից ու հարստութիւնից, կարող է իր կեանքը հասցնել ամենապաշտ ու կոպիտ կացութեան, սակայն այնուամենայնիւ այդ բոլորի մէջ չկտնել իր կեանքի ճշմարիտ իմաստը (Ուսմ. Կենտր. մասին IX):

Ով հետաքրքրվում է իմանալու, թէ ինչումն է կայանում

կեանքի իմաստը և ամաչում է իր վատ հագուստից, ամաչում ուտելու հասարակ, աղքատ կերակուր՝ ապա նա պատրաստ չէ ճանաչողութեան համար (Խօսակց. IV, 19):

Նա, ով սիրել է ճշմարտութիւնը, աւելի լաւ է այն մարդուց, որը միմեայն գիտէ ճշմարտութիւնը: Նա, ով իր գերազոյն բարիքը գտնում է ճշմարտութեան մէջ՝ աւելի լաւ է, քան նա, որը միմեայն սիրում է այն (Խօսակց. VI, 18):

III

Կրօնի մասին

Ո՞րքան էլ լաւ երեայ այն կրօնը, որը յենվում է գերբնականութեան վրայ, այնու ամենայնիւ արդ կրօնը չէ կարող ստուգվել բանականութեամբ: Իսկ այն, ինչ որ չէ կարող ստուգվել բանականութեան միջոցով՝ չէ կարող լինել ճշմարիտ և հաստատուն հաւատքի առարկայ: Իսկ այն ինչ որ չէ կարող լինել ճշմարիտ և հաստատուն հաւատքի առարկայ՝ չէ կարող նաև ծառայել իրբե ձեռնարկ վարմունքների:

Նոյն կերպ՝ որքան էլ լաւ երեայ այն կրօնը, որը յենվում է բանութեան վրայ՝ այդպիսի կրօնը չէ կարող յարգելի լինել: Իսկ այն ինչ չէ կարող լինել յարգելի՝ չէ կարող լինել նաև ճշմարիտ և հաստատուն հաւատքի առարկայ: Իսկ այն, ինչ որ չէ կարող լինել ճշմարիտ և հաստատուն հաւատքի առարկայ՝ չէ կարող նաև ծառայել իրբե ձեռնարկ վարմունքների:

Այդ իսկ պատճառով կրօնը պէտք է համաձայնեցված լինի մարդու բանականութեան հետ, որով և ենթակայ՝ առողջ դատողութեան ստուգմանը: Այդպիսի կրօնը՝ հին խմաստունների և ճանաչված գիտունների ուսմունքների հետ համեմատելիս՝ պէտք է լինի համաձայն այդ ուսմունքների, համաձայն նաև բնութեան ֆիզիքական օրէնքների, չունենալով և ոչ մի հակասութիւն այդ օրէնքների հետ: Ուստի և եթէ այդպիսի կրօն դաւանող մարդուն հարկ լինէր կոիւ մղելու աշխարհի լուլոր ոյժերի ոչմ, նա կը մնայ հաստատուն իր հաւատի վրայ (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀՀԻ):

IV

Սիրու մասին

Սէրը այն է, որի մէջ արտայայտվում է մեր աստուածաւյին էութիւնը: Սէրը՝ զա է մեր գոյութեան սկիզբն ու վախճանն: Առանց սիրոյ կեանք չկայ: Ուստի և սէրը նա է, որի առջև խոնարհվում է իմաստուն մարզը (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀՀՎ):

Տսու-Կունզը հարցրեց Կօնֆուցիոսին, թէ կայ արդեօք այնպիսի մի բառ, որը կարելի լինէր զործածել իրբե հիմք մարզկային բոլոր գործողութիւնների: Կօնֆուցիոսը պատասխանեց. կայ այդպիսի մի բառ, այդ բառը՝ զա է, որը նշանակում է՝ չանել ուրիշին այն, ինչ որ չհս ցանկանում քեզ համար (Խօսակց. XV, 23):

Երբ ցանկութիւնները մաքուր են և թափացված սիրով՝ սիրով շիտակ և մաքուր է գառնում: Իսկ երբ սիրով շիտակ է և մաքուր՝ մարդ ուղղվում է և գառնում լսւ: Իսկ երբ մարդ ուղղվում ու լաւ է գառնում՝ այն ժամանակ ընտանիքումն էլ տիրում է կարգ: Իսկ երբ ընտանիքում հաստատվում է կարգ՝ երկրի մէջ էլ հաստատվում է բարեկարգութիւն: Իսկ երբ երկրում հաստատվում է բարեկարգութիւն, այն դէպքում հաստատվում է խաղաղութիւն և համերաշխութիւն ամբողջ տիհերբում (Մեծ Գիտութիւն. V):

Միմիոյն նա, ով տիրապետում է անպայման սիրոյ՝ կարող է թափանցել իր կեանքի օրէնքի էութեան մէջ: Նա, ով ընդունակ է թափանցելու կեանքի օրէնքի էութեան մէջ՝ ընդունակ կը լինի նաև թափանցելու ուրիշի կեանքի օրէնքի էութեան մէջ: Թափանցելով իր և ուրիշի կեանքի օրէնքի էութիւնների մէջ՝ նա ընդունակ կը լինի թափանցելու ֆիզիքական ընութեան օրէնքների էութեան մէջ: Նա, ով ընդունակ կը լինի թափանցելու ընութեան օրէնքների էութեան մէջ, ապա ընդունակ կը լինի նմբգործել նաև տիեզերքի ստեղծագործող ոյժերի վրայ: Իսկ նա, ով ընդունակ կը լինի ներգործել տիեզերքի ստեղծագործող ոյժերի վրայ՝ տիեզերքի ոյժերի հետ ի մի կը ձուլի (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀՀՎ):

Նա, ով իր մէջ դաստիարակում է իր լաւագոյն հիմնական յատկութիւնները և աշխատում է արտայայտել նրանց, հաւատալով սիրոյ, այդպիսին հետու չէ ճշմարիտ ճանապար-

հից, այսինքն՝ հոգեկան կեանքի օրէնքների գիտութիւնից
(Ուսմ. Կենտր. մասին XIII, 3):

Ինչպէս որ ոչ մի բանի պէտք չէին լինի ոչ ցուլերը, ոչ
ձիաները, ոչ սայլերը, ոչ սահնակները առանց լուծի կամ ձիու
անարի (ԽՕՄՅԴԵ) այնպէլ էլ ոչ մի բանի հարկաւոր չէ լինում
մարդկանց կեանքի համար այն մարդը, որ չունի սէր դէպի
մերձաւորները (Խօսակց. II, 22):

Միայն այն մարդը, որը ապրում է սիրով, կարող է շակել
մարդկանց յարաբերութիւնները, կարող է հաստատել բարոյա-
կանութեան ճշմարիտ օրէնքներ և հասկանալ աշխարհաշինու-
թեան օրէնքները (Ուսմ. Կենտրոնի մասին XXXII):

Բոլոր մարդիկ ծնված են նրա համար, որ լինեն բարի,
եթէ մարդ բարի չէ, ապա դա այլանդակումն է (Խօսակց.
VI, 17):

V

Առաքինուրեան և իմաստուրեան մասին

Կեանքի իմաստութիւնը նրանումն է, որ մարդ զիտակ-
ցէ և բարձրացնէ իր մէջ իմացականութեան պայծառ սկզբուն-
քը, որը մենք ամենքս էլ ստացել ենք Աստծուց: Կեանքի ի-
մաստութիւնը՝ մարդկանց վերածնութեան մէջ է. ոլէտք է սո-
վորեցնել, որ նրանց գերագոյն երջանկութիւնը՝ աստուածային
այդ սկզբունքի արտայարտման, աւելի և աւելի կատարելա-
գործման մէջ է (Մեծ Գիտութիւնը I):

Իեն-իիւնգը հարցը կանչուցիսսին, ի՞նչ բան է կատար-
եալ առաքինութիւնը: Կօնֆուցիոսը ասաց, գերազոյն, կատար-
եալ առաքինութիւնը նրանումն է, որ մարդ իրան ստորագրէ
Աստծու կամքին, տիրապետէ իրան իր այդ գրութեան մէջ և
ձգտէ դէպի ճշմարիտ կեանքը: Ճշմարիտ առաքինութիւնը մար-
դու մէջ առաջ չէ գալիս դրսից, կախումն չունի ուրիշից, նրա
աղբիւրը—իւրաքանչիւր մարդու սրտումն է:

Գործնական ի՞նչ օրէնք կարելի է արտարերել սրանից,—
հարցը այնուհետև իեն-իիւնգը: Կօնֆուցիոսը պատասխա-
նեց, օգտվեցէք ձեր զգայարանքներով՝ տեսողութեամբ, լսողու-
թեամբ, օգտվեցէք ձեր խօսքով այն ժամանակ միայն, եթէ ենտ
թարկվում էք գերագոյն իմացականութեան ձայնին (Խօսակցու-
թիւններ XII, 1):

Յանդ-Զին հարցնում էր, թէ ի՞նչումն է կայանում իմաստու-
թիւնը: Կօնֆուցիոսը ասաց, մարդկանց հետ ունեցած յարաբե-
րութեան մէջ դրէք ձեզ համար իրեք նպատակ՝ ճշմարտութիւ-
նը. այն բանին, որը ձեր բանականութիւնը ընդգրկել և ըմ-
բռնել չէ կարող, վերաբերվեցէք յարգանքով, բայց եղէք հեռու,
դրանումն է իմաստութիւնը (Խօսակցութիւններ VI, 20):

Իմաստուն, բարձր մարդը օժաված է երեք առաքինու-
թիւններով. նա ճշմարիտ սիրով է, ուստի և հոգսերից ազատ,
նա՝ ճշմարիտ իմաստուն է, ուստի և ազատ մոլորութիւններից.
նա՝ ճշմարիտ առնական է, ուստի և ազատ սարսափից (Խօ-
սակց. XIV, 30):

Առաքինի մարդու բերանից գուրս են գալիս առաքինի
խօսքեր, սակայն դա չէ նշանակում, որ եթէ մէկը առաքինի
խօսքեր է ասում՝ նա առաքինի մարդ է: Առաքինի մարդը
խսկապէս տիրապետում է առնականութեան, բայց դա չէ նշա-
նակում, որ եթէ մէկը առնական է, նա և՛ առաքինի է (Խօ-
սակց. XIV, 5):

Տանից գուրս են գալիս միմիայն դռնից: Այնպէս էլ կեան-
քում պէտք է գուրս գալ առաքինութեան դռնից (Խօսակց.
VII, 15):

Առաքինութիւնը երեք միայնակ չէ մնում, նրանով վա-
րակվում են դրացիները (Խօսակց. VII, 25):

Առաքինութիւնը մեղանից հեռու չէ: Բաւական է միայն
ցանկալ առաքինի լինելու, և նա (առաքինութիւնը) խսկան
այստեղ կը լինի—մեղ մօտ և մեր մէջ (Խօսակցութիւններ
VII, 29):

VI

Վարքի մասին

Ամեն բանում գործի աջողութիւնը կախված է մարդու
պատրաստութեան աստիճանից. գործի համար պատրաստու-
թեան բացակայութեան մէջ վաղօրօք կարող է նախատեսել նրա
անաջողութիւնը: Եթէ նախապէս խորհէին այն մասին թէ՝ ի՞նչ
են ուղղում ասել, մենք խօսակցութեան ժամանակ գժվարու-
թիւններ չէինք կրիլ: Եթէ նախապէս խորհէինք մեր զբաղ-
մունքների մասին՝ մենք ոչ դժվարութեան չէինք հանդի-
պիլ: Եթէ նախապէս մտածէինք մեր վարմունքների մասին,
գհոգկան յուղմունքներ չէինք կրիլ: Եթէ մենք նախապէս մտա-

ծէինք և հասկանայինք կեանքի նպատակն ու իմաստը, մեր կեանքը միշտ հարուստ կը լինէր խելացի իմաստով (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀ, 16):

Տուշ-Լուն հարցնում էր Կօնֆուցիոսին, թէ ինչպէս պէտք է վարդի իմաստուն մարդը: Կօնֆուցիոսը ասաց. նա պէտք է իրան դաստիարակէ այնպէս, որ իր աչքում յարգելի երեայ:— և դա է բոլորը,— աւրցրեց Տուշ-Լուն:— Ո՛չ, — նա պէտք է իրան դաստիարակէ այնպէս, որ կարողանայ բախտաւորութիւն պարգևել ուրիշ մարդկանց: Դա է բոլորը:— Ո՛չ, — նա պէտք է իրան դաստիարակէ այնպէս, որ կարողանայ նպաստել մարդկանց խաղաղ կեանքին (Խօսակցութիւններ ՀՀ, 45):

Հասարակ, հանապազօրեայ կեանքում օգտվեցէր կատարեագործվելու իւրաքանչիւր զէպից և հնարաւորութիւնից: Եթի ձեզ անհրաժեշտ է լինում երկար խօսել՝ ըստ հնարաւորութեան սակաւ խօսեցէք. խօսքերը պէտք է համապատասխանն վարժունքներին, իսկ վարժունքները— խօսքերին (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀ):

Առանց ինքնակատարելազործութեան քաղաքավարութիւնն էլ դառնում է լուծ, խելամտութիւնը այլասեավում է վախկուութեան, առնականութիւնը— բռնութեան, իսկ գիւրտ-բորբոքութիւնը— կոպատութեան (Խօսակցութիւններ ՀՀ, 2):

Կացնակոթը տաշող հիւսը իր առջել ունի դրած դրս օրինակը: Վերցնելով կոթը այն կացնի, որով տաշում է, նա նայում է նրա վրայ և այս և այն կողմերից: Եւ երբ նա տարտեց նոր կոթի շինելը, նայում է երկու օրինակների վրայ ևս՝ տեսնելու համար, թէ որբան նման են իրար: Այդպէս է վարդում նաև իմաստուն մարդը. իր առջե նա տեսնում է կեանքի հիմնական, բարոյական օրէնքը և նրան է համակերպում իր կեանքը:— Եթի մարդ արտայայտում է իր սէրն ու ողորմածութիւնը՝ նա կեանքի ճշմարիտ ուղիից նեռու չէ:— Իմաստունը ուրիշին չէ անում այն, ինչ ինքը չէ ցանկանում, որ իրան անեն (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀ):

Այն մարդու ճանապարհը, որը ապրում է հոգեկան բարձրագոյն կեանքով, կարելի է նմանեցնել ճանապարհորդութեան՝ պէտի հեռաւոր երկիր:— անհրաժեշտ է անցնել նախ մերձակայ տեղը: Այդ ճանապարհը կարելի է նմանեցնել նաև սար բարձրանալուն:— պէտք է սկսել սարի փեշերից (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀ):

Հնումը մարդիկ երկար ժամանակ խորհում էին՝ նախ քան ու և է միաք արտայայտելը. նրանք վախենում էին, որ իրանց

վարժունքները չհակասեն իրանց խօսքերին (Խօսակցութիւններ ՀՀ, 22):

Նա, ով որ շատ է պահանջում իրանից, բայց քիչ ուրիշը, դրանով ապահովվում է ուրիշների արհամորհանքից (Խօսակցութիւններ ՀՀ, 14):

Անարդարութեան դէմ արդարութեամբ պատասխանեցէք, բարութեան դէմ— բարութեամբ (Խօսակցութիւններ ՀՀ, 36):

Աշխատիք քո մաքերի մաքրութեան վրայ: Եթէ դու չունինաս վատ մտքեր, չես ունենալ նաև վատ վարժունքներ:

Եղիր միշտ ուշադիր այն բանին, որ անում ես. հչ մի բան ուշադրութեանդ համար անսարժան մի համարիլ:

Տիրապետես ըեզ այն չափով, որով յարգես ուրիշներին ինչպէս քեզ և վարփես նրանց հետ այնպէս, ինչպէս մենք ցանկանում ենք, որ միզ հետ վարդեն, — ահա կեանքի ուղիդ ճանապարհը, ճշմարիտ վարժունքը (Խօսակցութիւններ):

VII

Իմաստուն, հոգեոր մարդու մասին.

Իմաստուն և բարոյական մարդու կեանքը— զա երկրի վրայ կեանքի օրէնքի, Աստծու կամքի իրականացումն է: Հասարակ, տղէտ մարդու համար կամքը— այս կեանքի տիեզերական օրէնքի չգիտութեան արտայայտութիւնն է (Ուսմ. Կենտրօնի մասին ՀՀ, 1):

Հոգեոր մարդու արտաքին կեանքը ոչնչով աչքի չէ ընկնում, սակայն այնուամենայնիւ նա հետզետէ աւելի և աւելի մեծանում է, աւելի և աւելի գեղեցկանում: Իսկ հասարակ մարդու կեանքը միշտ որ և է բանով աչքի է ընկնում, սակայն աստիճանաբար նա կորցնում է իր նշանակութիւնը, մինչև որ հասնում է արմատական ոչնչացման:

Իմաստուն, հոգեոր մարդու կեանքը հասարակ է և սովորական, միհնոյն ժոմանակ գրաւիչ. նա կոպիտ է, սակայն տոգորված նրբութեամբ. նա թեթե է, բայց նրա մէջ ամեն ինչ կանոնաւոր է:

Իմաստունը զիտէ, որ մեծ գործերի կատարումը կայանում է նրանում, որ փոքրերը լաւ կատարենք: Նա զիտէ, որ աննշան պատճառներից բղխում են, նշանաւոր հետևանքներ:

Իմաստունը զիտէ ծանրակշռութիւնը այն բանի, որը չէ մազրթւուկով ամմաեն մշանքների ընբռնման: Նա զիտէ, որ

դա նրան հնարավորութիւն է տալիս թեսակոխելու գերագոյն աշխարհի, գերագոյն կեսարքի մէջ: Ուստի և իմաստուն մարդը ուշադրութեամբ զննում է իր սիրու, հետեւում է, որ պատճառ չգունի իրան դատափետելու, որ իր մտքի մէջ վատ խոկումներ չունենայ:

Իմաստուն մարդու առաւելութիւնը ուրիշների նկատմամբ կայանում է նրանում, որ նա տեսնում է այն, ինչ ուրիշները չեն կարող տեսնել: Ուստի իմաստուն մարդը կենացրոնանում է նոյն իսկ այն ժամանակ, երբ նա ոչինչ չէ անում: արդար է լինում և այն ժամանակ, երբ նա ոչինչ չէ ասում:

Հսու որում հոգեւոր, բարոյական մարդը լաւութիւն է անում մարդկանց և չէ սպասում դրա համար ոչ վարձարութիւն և ոչ խրախուսանք, բարկութեան ոչ մի նշոյլ ցոյց չտալով, նա մարդկանց հասցնում է սարսափի և ցնցման աւելի մեծ չափով, քան այդ կարող էին անել ամենադաժան տառապանքները: Ուստի և հոգեւոր մարդը, որ ապրում է միայն հասարակ, ճշմարտասէր, սիրային կեանքով, մարդկանց կեանքի մէջ մացնում է խաղաղութիւն և համերաշխութիւն (Ուսմ. կենարօնի մասին XXXIII):

Իմաստուն մարդը իրան համար բոլոր անհրաժեշտութիւնները փնտրում է իր ներսը, իսկ տգետը—ուրիշների մէջ (Խօսակցութիւններ XV, 20):

Իմաստուն մարդու համար առաւել ակնյայտնի ոչինչ չկայ, քան այն, որը պահված է նրա հոգու գաղտնաբանում, ակնյայտնի ոչինչ չկայ նրա համար, քան գործողութիւնների նուրբ, անտեսանելի պատճառները: Ուստի և իմաստուն մարդը ուշադրութեամբ աշխատում է հոգու գաղտնի հրապոյրների վրայ, որոնք նշմարելի են միմեայն նրա համար (Ուսմ. կենարօնի մասին I, 3):

Իմաստուն մարդը համակերպվում է իր կեանքի հանգամանքների հետ, նա չէ պահանջում այն, որը չկայ նրա գրութեան մէջ: Եթէ նա ընկնի հարուստ և մեծատուն մարդու գրութեան մէջ, նա ապրում է այնպէս, ինչպէս ապրում է հարուստ և մեծատուն մարդու: Եթէ նա աղքատութեան մէջ է, ցածր դրութեան մէջ, նա ապրում է այն մարդկանց նման, որոնք գտնվում են աղքատութեան և ցածր դրութեան մէջ: Եթէ գտնվի վայրենի մարդկանց մէջ, նա կապրի այնպէս, ինչպէս վայրենիները: Եթէ նա ընկնի վտանգների և բարդութիւնների մէջ, այդ դէպրում նա վարվում է այնպէս, ինչպէս կը վարվէր նմոն հանգամանքների մէջ ապրող մարդը: Մի խօսքով իմաս-

տուն մարդու համար չկայ մի զրութիւն, որի մէջ նա զինէրի անձի տէրը: Ունենալով միծ գիրք, իմաստունը չէ աշխատում այդ ցոյց տալ այն մարդկանց, որոնք իրանից ցածր են կանգնած: Լինելով ստորագրեալի գրութեան մէջ, նա չէ քըծնում իրանից բարձր կանգնողների առջև (Ուսմ. կենարօնի մասին X, 17):

Իմաստուն մարդը կեանքի գլխաւոր գործը համարում է՝ կեանքի իմաստի ճանաչողութիւնը, իսկ հասարակ, տգէտ մարդը կեանքի գլխաւոր գործը համարում է մեծաքանակ դրամի դիզումը (Խօսակցութիւններ VI, 11):

Լուսաւորված, իմաստուն մարդը միշտ աշխատում է օդնել ուրիշ մարդկանց լաւ յատկութիւնների արտայայտվելուն. տգէտ մարդը վարփում է ընդհակառակը (Խօսակց. XΠ, 16):

Իմաստուն մարդը՝ ճգնում է ուղղել իր անձնական կեանքը գէպի ինքը և ոչինչ չէ պահանջում ուրիշներից: Նա չէ տրանջում Աստծուց, իր ճակատագրի նկատմամբ ուրիշներին չէ մեղադրում և մարդկանց վրայ չէ գրգռվում (Ուսմ. կենարօնի մասին XIV):

Ճշմարիտ իմաստուն մարդը չէ թողնում առաքինութեան ուղին և ոչ մի վայրկեան, փոթորիկների և տանջանքների ըռուպէին այդ նոյն ճանապարհին նա մնում է միմնոյն անյողողութը, ինչպէս միշտ (Խօսակցութիւններ IX, 5):

Իմաստուն, բարձր մարդը աշխատում է հասկանալ և համակերպել ուրիշներին և ոչ թէ ստրկանալ, տգէտը սակայն ստրկանում է, բայց չէ աշխատում հասկանալ ուրիշներին (Խօսակցութիւններ VΙΙI, 23):

Ճշմարիտ իմաստուն մարդը չունի ոչ հրապուրանք, ոչ արհամարհանք որևէ բան ի հկատմամբ: Միակ բանը, որ նրան հրապուրում է, զա ճշմարիա զերագոյն կեանքն է (Խօսակց. IV, 10):

Տուու-Խունգը հարցրեց կօնքուցիոսին, թէ ի՞նչ բան է իմաստուն մարդը: Կօնքուցիոսը պատասխանեց, իմաստուն մարդը նա է, ով ասում է միմեայն այն, ինչ երևան է գալիս իրեկ հետեւանք նրա գործի, կեանքի. ասում է այն, ինչ արդէն կիրարկում է իր կեանքի մէջ (Խօսակցութիւններ I, 13):

Հոգեւոր մարդը հանգիստ է և լուսաւոր, իմաստութիւնից զուրկը—զրգոված է և մռայլ (Խօսակցութիւններ XV, 36):

Իմաստուն մարդը զգոյշ է և զանդակ մէջ: Նա զիտէ՝ ինչպէս որ դժվար է լինում վեր կացնելու համար վելու նկատմամբ, այնպէս էլ զգացնելու համար վեր կացնելու համար մէջ ապրող մարդը: Մի խօսքով իմաս-



խօսելու համար (*Խօսակցութիւններ* XII, 3):

Հոգեոր մարդը ազնիւ է, բայց ոչ հպարտ. տղէտ մարդը հպարտ է, և հչ տղնիւ (*Խօսակցութիւններ* XIII, 26):

Եթէ գուք հրաժարվում էք որ և է մէկին խրատելուց, երբ նա պարաստ է ձեզ հասկանալու, գուք կորցնում էք մի մարդ: Եթէ գուք խրատում էք այն մարդուն, որը ձեզ ընդունակ չէ հասկանալու՝ գուք կորցնում էք խօսքեր: Իմաստուն է այն մարդը, որը չէ կորցնում ոչ մարդիկ և ոչ խօսքեր (*Խօսակցութիւններ* XV, 7):

VIII.

Սխայներ եւ մոյորաւրիխներ.

Սխալների չարիքը նրանում չէ թէ նրանք տեղի են ունենում, այլ նրանում, որ մարդիկ սխալներ գործելով հանդերձ չեն աշխատում ուղղել նրանց (*Խօսակցութիւններ* XV, 29):

Երբ տեսնում էք մի լու մարդու մտածեցէք նրան նմանվելու մասին, իսկ երբ տեսնէք վատին—հայկացէք ձեր սրտի մէջ՝ չկայ արդեօք ձեր մէջ ես այն, ինչ որ գուք տեսաք այդ վատ մարդու մէջ (*Խօսակցութիւններ* IV, 17):

Տսու-Կունգը հարցնում էր Կօնֆուցիոսին, թէ կարող է որևէ բան զզվելի երևալ իմաստուն մարդուն: Կօնֆուցիոսը պատասխանեց. նրա համար զզվելի են նրանք, որոնք գուռուց են այլոց սխալների վերաբերմամբ. զզվելի են այն մարդիկ, որոնք ցած գրութեան մէջ գործնվելով՝ նախանձում են և հայշոյում բարձր որութիւն ունեցող մարդկանց. նրան զզվելի են յանդուգն մարդիկ, որոնք իրացց զսպել զգիտեն. զզվելի են մարդիկ, որոնք չեն մտածում, թէ ինչ են անում: Ինձ համար, —աւելացրեց Կօնֆուցիոսը, բացի զբանցից, զզվելի են նրանք, որոնք իմաստութեամբ զբազվում են միմեայն հետաքրքրութեան համար, զզվելի են նրանք, որոնք խանճվում են ուրիշների գործերի մէջ, զզվելի են յանդուգն մարդիկ, որոնք կարծում են, թէ իրանք առնական անձեր են (*Խօսակցութիւններ* XVII, 24):

Կան ցորենի այնպիսի ընձիւղներ, որոնք երբէք հասկ չեն դառնալ, և կան այնպիսի հասկեր, որոնք երբէք հատիկներ չեն տալ (*Խօսակցութիւններ* IX, 21):

Երբ նետը չէ դիպչում նրան զրված տեղին, արձակողը մեղադրում է ինքն իրան և ոչ ուրիշին: Այդպէս է վարվում

Նաև իմաստունը (*Ուսմ. կենտրօնի մասին* XIV, 5):

Երեք տեսակ սխալներ կան մարդկանց փոխադարձ յարաքերութիւնների միջն, առաջինը, զա՞խօսելու է առաջ, քան այդ հարկաւոր է. երկրորդը՝ ամօթխածութիւնը—չխօսելու, երրորդը՝ հանրաժեշտ է, երրորդը՝ խօսելու—առանց լսելու ձեր խօսակցին (*Խօսակցութիւններ* XVI, 6):

Արտաքինով լուրջ և վոեմ, իսկ ներքուստ դատարկ ու թոյլ մարդիկ—ահա մարդկանց ամենաստոր տեսակը. այդպիսի մարդիկ նման են գողերի, որոնք գաղտակողի կերպով գիշեր ժամանակ մահում են մարդկանց տները (*Խօսակց. XVII, 12*):

Նահանգներից մէկի կառավարիչը գանգատվում էր, որ նրա շրջանում գողեր շատ կան. խորհուրդ էր հարցնում, թէ ինչպէս աղատվի նրանցից: Կօնֆուցիոսը ասաց. եթէ գուք պապէիք ձեր ագանութիւնը, այն ժամանակ ձեղ մօտ գողեր չէին լինիլ: Մարդիկ գողութիւն չէին անիլ նոյն իսկ ախտէպում, երբ գուք նրանց վարձատրութիւն առաջարկէիք գողութեան համար (*Խօսակցութիւններ* XIII, 18):

Այսակզ, որուեղ կայ ճշմարիտ լուսաւորութիւն՝ դասակարգին տարբերութիւններ չկան (*Խօսակցութ. XV, 38*):

Զէ կարող պատահել, որ անկանոն ու խճճած հիմքեց՝ առաջ գան այնպիսի հետևանքներ, որոնց հիմքը կարգ ու կանոնի մէջ է (*Մհծ Դիտութիւնը* VII):

IX.

Աւամունք կեանքի մասին՝ զրված աշակերտների ճեղքով «Կօնֆուցիոսի խօսակցութիւնը» զրքի մէջ*)

Իմ ուսմունքը չափազանց պարզ է, նրա մէջ ոչինչ չկայ անհասկանալի, չկան զաղտնիքներ, որոնց ես կամնայի զաղտնի պահել կամ որոնք բաց անէի միմեայն իմ ամենամօտիկ և սիրելի բարեկամների առջև: Ամեն ինչ պարզէ և հասարակ (VII, 23):

Իմ ամբողջ ուսմունքը կայանում է միմեայն նրանում, որ ինենք հաւատարիմ մեր մէջ դրված աստուածային սկզբունքն և սիրենք մարդկանց (IV, 15): Սիրեցէք բոլոր ասրդկանց, չմուսանալով, որ ոճագործներին պէտք է խղճալ (XII, 22):

*) Իւրաքանչիւր քաղվածքից յետոյ փակագծերի մէջ հոօմէական թվանշաններով յիշված է «Խօսակցութիւններ» գիրքը, իսկ արաբական թվանշաններով—գրքիգլուխը:

Մի կարծէք, որ ձեր եղբայրները միայն նրանք են, ուրոնք ձեզ արիւնակից են.—բոլոր մարդիկ եղբայրներ են: Մի տիրէք, մի տրտմէք, որ դուք միայնակ էք. բոլոր մարդիկ ձեր եղբայրներն են, դուք միայնակ չէք (XII, 51):

Երկինքը տվեց մեղ բարձրագոյն կեանք, կեանքի այն աղբիւրը, որին ոչ ոք չէ կարող մեղանից անջատել, այն կեանքը, որը ոչնչացնել չէ կարող ոչ մի մարդ:

Ուստի և այն մարդկանցից չպէտք է վախենալ որոնք մեղ ուղում են խորակեր: Այդ մարդիկ չեն կարող ոչնչացնել այն կեանքը, որը մեղ չեն տուել իրանք, Սակայն եթէ ձեր կեանքը ոչնչացնել կուղենաք դուք ինքներդ: այդ բանը ուղղեք չէ կարող ոչ ոք (III, 13):

Հաւատարիմ եղէք, կեանքի աղբիւրին, մաքրեցէք նրա հոսանուտը, և դրանով դուք աւելի մեծ բան արած կլինէք, քան այն, որ դուք կուղենայիք երազել անելու համար (XV, 28):

Այն մարդկանց, որոնց դուք հանդիպում էք, մի ցանկաք և մի անէք այնպիսի բան, որպիսին չէիք ցանկալ ձեզ համար և չէիք ցանկալ որ ուրիշները անեն ձեզնոյնը (XV, 23. X, 11):

Եթէ ձեզ կլիրաւորեն, կզրկեն, կստորացնեն—եղէք այնուամենայնիւ այդպիսիների նկատմամբ արդար, աշխատեցէք հասկանալ, թէ ինչն նրանք այդպիս վարդեցին:

Եթէ դուք ուրիշի մէջ նկատում էք որ և է վատ, ստոր հակառակ այն բանին, որը յատուկ է բարձր էակին, մի դատէք նրան, այլ դիտեցէք ձեր ներսը և դուք, ըստ երկոյթին, կըգտնէք ձեր մէջ հէնց նոյնը և կը հասկանաք, որ ամենից առաջ ձեզ է հարկաւոր ազատվելու ձեր ներսը եղած վատութիւնից: Իսկ զա՞ ձեղանէց է կախված: Եւ եթէ ուրիշի մէջ տեսնում էք բարձր, բարի, սուրբ բան,—աշխատեցէք այդ առաքինութիւնները փոխադրել ձեր մէջ:

Եղէք արդար, հասկացէք ձեզ զրկողներին: Բարութիւն անողներին բարութիւնը էլ պատասխանեցէք:

Ամենից գլխաւորը—յիշեցէք, որ ձեր մէջ զրված է, առում է բարձր էակը (I, 14):

Եւ որպէս հոգեոր էակ, հրաժարվեցէք երկրայինից: Երկրայինի մէջ չէ որ պիտի զտնէք ճանապար: և զեկավարութիւն, այլ միմիայն աստուածային ի, երկնալինի մէջ (XX, 3):

Պաշտեցէք երկնայինը: Եւ պաշտելով երկնայինը, զիտեցէք, որ նա ձեր մէջ է զրված: Զեղանից դուրս մի որոնէք նրան, այլ ձեր ներսը, ձեր սրտի, ձեր խզմի մէջ (XV, 20):

Հոգեոր էակի յատկանին ու կոչումը նրանում չէ, որ նա-

ապրինարուստ տան մէջ և մնվի առատօրէն: Սպրեցէք աղքատ, բայց եղէք աղքատ, անկախ, որպէս զի ձեր սովորաթիւնը ների ստրուկը չլինէք (I, 15):

Մարգու կեանքի էութիւնը արաւաքին կացութեան մէջ չէ, այլ նրա կեանքի էութիւնը կայանում է նրանում, թէ ինչպէս է նա վերաբերում դէպի ինքը (XV, 31): Նայեցէք մեր ընկեր Խ ին. նա աղբատ, է, բայց իմաստուն և գոն (VI, 9):

Այրացրէք ձեր մէջ կեանքի արմատը, հիմունքը, որը կախված չէ արտարին երևոյթից: այն ժամանակ դուք կը մօտենաք բարձր էակի այն կատարելութեան, որին ձգտելը բը նական է բոլոր մարդկանց համար (XV, 31):

Եւ երբ դուք կը հասկանաք, որ ճշմարիտ բարիքը, կեանքի իմաստը—մեր ներսն է, այն ժամանակ դուք ինքներդ կը մասպանաք բարձր էակ, այսինքն կինէք և առաքինի, և իմաստուն, և առնական:

Միայն առաքինի մարդն է աղատ արտմութիւնից և վըշտից, միայն իմաստունն է աղատ բոլոր գժվարութիւններից և միայն առնականը աղատ՝ ամեն տեսալ երկիւղից:

Ի՞նչ տրտմութիւն, ի՞նչ վիշտ կարող է համակել առաքինի մարդուն, երբ նա սիրում է երկինքն ու իր մերձաւորին: Ի՞նչ գժվարութիւն կարող է լինել իմաստունի համար, երբ նա ըմբռնել է կեանքի իմաստը: Եւ մըսկէս երկիւղ կարող է պաշտել առնական մարդուն, երբ նա գիտէ, որ իր ներսը ամեն ի՞նչ կարգին է և սիրու մաքուր (XIV, 30. XV, 18. XII, 4):

Հոգեոր մարդը երբէք չի զգալ անբաւականութիւն, բանի որ նա կախումն չունի ուրիշից: Այն ամենը, ի՞նչ որ նրան անհրաժեշտ է—միշտ նրա մօտն է, որովհետեւ նա որոնում է այն ի՞նչ որ նրա մէջ կալ արգէն (XV, 20):

Հեշտ է ճանաչելը հոգեոր մարդուն: Այդպիսի մարդը ուրիշների մէջ էլ տեսնում է այն, ի՞նչ որ զրված է իր մէջ (V, 15):

Հոգեոր մարդը մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնների մէջ խաղաղ է և սիրալիր, բայց ոչ քծող. յարգող, բայց իր ամբողջ արժանիքը պահպանող. լուրջ, բայց ոչ հպարտ, անկեղծ է ամենքի հետ, բայց չէ պատկանում որ և է աղանդի (XIII, 23. XIII, 26. XV, 21): Շիվելով ուրիշների հետ, նա անխուսափելի կերպով աղնվացնում է նրանց, լաւագոյնը նըրանց մէջ բարձրացնում (XII, 16): Նայնիսկ վայրենիների մէջ նա լուսաւորում է միենոյն լուսով և բարձրացնում նրանց, չը

կայ այն միջավայրը, որտեղ նո չկարողանար տարածել իր քարեւար ազդեցութիւնը (IX, 13):

Բայց ճշմարիտ հոգեոր մարդկանալու համար, պէտք է սիրել ճշմարտութիւնը և գտնել բաւականութիւն և ուրախութիւն նրա մշտական որոնման մէջ, մշտական ուսման և վարժութեան մէջ (I, 1):

Ինչպէս որ հոգաթումը բարձրացնելու համար կարեւորութիւն ունի՝ հողի իւրաքանչիւր բուռը, այնպէս էլ առաքինութեան հասնելու համար անհրաժեշտ է ամենօրեայ ուսումնասիրութիւն՝ ոչ թէ մարդկանց հաւանութիւնը ձեռք բերելու նպատակով, այլ ինքնակատարելագործութեան համար (IX, 18. XIV, 25):

Կռութեամբ պէտք է կուտակէ մարդ իշ մէջ գիտութիւնը, ականջ դնելով ամեն բանին և հեռացնելով այն ամենը, ինչ որ կասկածելի է. գիտելով ամեն ինչ և հետանալով այն ամենից, ինչ որ հոգու համար սպանիչ է (VII, 2. II, 18):

Միայն նա կը լինի ճշմարիտ լուսաւորվածը, ով իր սընունդը կը տեսնի ճշմարտութեան մէջ (XV, 32): Իսկ նա, ով կը հոգայ մի միայն իր մարմնի համար, կեանքի յարմարութեան, լաւ սնունդի և հարուսա հագուստի համար, ով կը վախենայ աղքատութիւնից և կը տեսնէ նրա մէջ ապերջանկութիւն, ամօթանք իր անձի համար,—նա լուսաւորւած չէ, այլ տղէտ մարդ (XIV, 3. IV, 9):

Ուստի կը լուսաւորված մարդը լինում է բարի, լցված բարեացակամութեամբ: Նա իր կեանքը այնպէս է դասաւորում, որ ուրիշներին վսաս չպատճառէ (XV, 8): Նա չի մտածելու իր օգուտների մասին, այլ մարդկանց բարօրութեան, և այդ բարօրութեան համար նա իր կեանքն անգամ պատրաստ կը լինի՝ զոհաբերելու (XIX, 1):

Եւ այն ժամանակ միտյն, երբ մարդիկ լուսաւորված կը լինեն՝ կը ոչնչանան նրանց մէջ տարբերութիւնները, չեն լինի այն ժամանակ հարուստներ՝ և աղքատներ, իշխաններ ու սուրբներ (XV, 37):



ւոր և հոգեստ մնունդ, զիտել հայկական իրականութիւնը և առանց հաշտվելու նրա հետ, անդադար պայքարել, կովել զիտութեան և զեղարուեամբ միջոցով ստորևութեան, աղտեղութեան հետ, որոնց այսոր համակված է հայկական կեանքը՝ վերածնութիւն հայկական կեանքի, տաւոր և բարոյական – ահա «ԱՐՕՐԻ» ձգտումներից մինչ ժողովրդականացում զիտութեան – ահա «ԱՐՕՐԻ» մի այլ ձգտումը՝ սերմանութեան հայ ժողովրդի մէջ համամարդկային զարարականների, խաղաղասիրութեան, եղբայրական և մարդկային համերաշխութեան – ահա «ԱՐՕՐԻ» երրորդ ձգտումը:

«Արօրը» տպագրելու է ամեն մի համարում գոնէ երկու ամրողական յօդուաներ՝ գլխաւորապէս կենսագրական և զիտական բավանդակարեամբ, որոնցից բաժանորդները կարողանան կաղմել առանձին բրոշիւրներ և այդպիսով տարգայ ընթացքում, ունենան գոնէ 242ԱՏ ԳՐԲՈՅԿՆԵՐ:

Կամենալով հնարաւորութիւն տալ թիւքահայ և Արևետեան հայ գրողներին մասնակցել «Արօրին» և զրանով զրական ու մտաւոր սերտ յարաբերութիւններ ստեղծել արևելեան և արևմտեան հայ զրական գործիչների միջև, «Արօրը» հրատարակվելու է հայկական հին, այն է լնդհանուրից լնդունված ուղղագրութեամբ։ Սակայն նրա էջերը բաց են լինելու և Վ. Ռ ուղղագրութեան քարոզողների առաջ։

«Արօրը» աշխատելու է անպարեզ քաշել երիտասարդ, թարմ, սկսնակ ոյժերը և զեկավարել նրանց զրական գործունէութիւնը։

«Արօրի» բաժանորդագինն է «Մշակի» բաժանորդների համար Ա. Ռ. ոչըաժանորդները վճարում են 2 ր. տեկի։

Գրամ և թղթակցութիւն ուղարկել այս հասցեով՝
Տիֆլիս, редакция журнала „ԱՐՈՐ“.
Tiflis, Rédaction du 1^{er} revue arménienne «Aror».

Թիֆլիս «Արօր» ամսագրի խմբագրութիւն

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵՍՆ

«Ազգային գրադարան



NL0158941

ԳԻՒՆ Ե 7 ԿՈՎԵԼ